

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2020-3-2-Ա

ք. Երևան

22.07.2020թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2020 թվականի հուլիսի 22-ի նիստում քննարկեց 2020 թվականի մարտի 13-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ Սամվել Գառնիկի Ղազարյանի (ք. Երևան, Մաշտոցի պ., շ. 2, բն. 34) բողոքը (№20191899) «Starko» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 111-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա տարածքից դուրս՝ բուլղարական «STORKO LTD» ընկերության կողմից օգտագործվող «Storko» ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին տեղեկությունն առկա է <https://www.storko.eu/bg> և [https://www.google.am/search?q=storko&tbm=isch&source=univ&sa=X&ved=2ahUKEwiB6Jzo3\\_bmAhWMs4sKHRqrD1oQsAR6BAGKEAE](https://www.google.am/search?q=storko&tbm=isch&source=univ&sa=X&ved=2ahUKEwiB6Jzo3_bmAhWMs4sKHRqrD1oQsAR6BAGKEAE) ինտերնետային կայքերում և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա տարածքից դուրս՝ բուլղարական «STORKO LTD» ընկերության կողմից օգտագործվող «Storko» ապրանքային նշանի նկատմամբ, որի մասին տեղեկությունն առկա է <https://www.storko.eu/bg> և

[https://www.google.am/search?q=storko&tbm=isch&source=univ&sa=X&ved=](https://www.google.am/search?q=storko&tbm=isch&source=univ&sa=X&ved=2ahUKEwiB6Jzo3_bmAhWMS4sKHRqrD1oQsAR6BAgKEAE)

[2ahUKEwiB6Jzo3\\_bmAhWMS4sKHRqrD1oQsAR6BAgKEAE](https://www.google.am/search?q=storko&tbm=isch&source=univ&sa=X&ved=2ahUKEwiB6Jzo3_bmAhWMS4sKHRqrD1oQsAR6BAgKEAE) ինտերնետային կայքերում և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և պնդում էր, որ մերժված և հակադրված ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման չեն:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

Մերժել արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ «Starko» (No20191899) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ